ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2017 թվականի N 132-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՀՐԱԶԴԱՆԻ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի պահանջների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի հունիսի 6-ի N 117-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-մտավորական զարգացման վարչության պետ *Լաուիկ Նահապետյանին.*

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հատուկ կրթության ծրագրով *2014-2016* թվականներին և *2017* թվականի առաջին կիսամյակին տրված սննդի գծով հաշվարկված գումարից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հետ վերադարձնել ***3534700*** *(երեք միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր)* ՀՀ դրամ, որից ***2944900*** *(երկու միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ ***589900*** *(հինգ հարյուր ութսունինը հազար ինը հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերուսհաշվարկման և նվազեցման հատուկ կրթության ծրագրով *2017* թվականի համար նախատեսված գումարներից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հունիսի 28
ք. Հրազդան